

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝ Արմինե Երզենյանի կողմից 2023թ-ի սեպտեմբերի 15-ից մինչև 2023թ-ի դեկտեմբերի 15-ը կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիր

Փորձագետի կողմից իրականացվել է աշխատանքային ծրագրով նախատեսված ինը կետերից յոթ կետերի մասով ամենօրյա ռեժիմով աշխատանքներ, իսկ մյուս կետերի մասով հիմնականում կատարվել է տվյալների ուսումնասիրում և հավաքագրում: Մասնավորապես.

1) Իրականացվել է բյուջետային գործընթացի շրջանակներում, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման, հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ (9 ամսվա բյուջետային հաշվետվություն՝ LS Finance, ՀԾ ծրագրերով, օրդերների մուտքագրում, պահեստի վարում, այդ թվում քաղաքացիական ավիացիայի կոմիտեի տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավաստությունն ապահովելու նպատակով, անցկացվել է գույքի և ֆինանսական պարտավորությունների գույքագրում, գույքագրման արդյունքների մուտքագրում:

2) Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակման, ֆինանսական ռեսուրսների գնահատման, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների տվյալների հավաքագրման աշխատանքներ և ներկայացվել է հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ:

3) Իրականացվել է նոր վարձատրության համակարգի անցմամբ պայմանավորված օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների, Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկ և հաշվետվություններ է ներկայացվել համապատասխան պետական մարմիններ:

4) Իրականացվել է «Հայվեյզ» ՍՊԸ-ի օդանավ շահագործողի վկայականի տրման շրջանակներում ներկայացվող հայտին կից ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրություն և ներկայացվել առաջարկություն:

5) Ուսումնասիրվել և վերլուծվել է Եվրոպական ավիացիայի և շրջակա

միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված տեղեկատվությունը (ԻԿԱՕ-ի 3-րդ կոնֆերանսը ավիացիայի և այլընտրանքային վառելիքների մասին և տարբեր անբնականաբար ծառայությունների միջև օբյեկտների կամ ծառայությունների ծախսերը բաշխելու համար օգտագործվող մեթոդաբանությունը) և ներկայացվել է կոնտակտային անձին:

6) Ուսումնասիրվել և վերլուծվել է ավիաընկերությունների կողմից ներկայացված ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSA) վերաբերյալ օդանավ շահագործող ընկերությունների՝ «Արմենիա էյրվեյզ» ՓԲԸ, «Ֆլայ Արնա-Հայկական ազգային ավիաուղիներ» ՓԲԸ, «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ, «Էյր Դիլիջանս» ՍՊԸ, «Հայկական ավիաուղիներ» ՍՊԸ-ի գծով տեղեկատվության ուսումնասիրություն և ցանկը մուտքագրվել է ICAO CORSA Central Registry (CCR) տվյալների բազա:

7) Ուսումնասիրվել է ս/թ. նոյեմբերի 20-21-ը ք. Բրյուսելում կայացած Եվրոկոնտորոլի երթուղային գանձումների կոմիտեի 121-րդ ընդլայնված նիստի ընթացքում «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի գծով 2024 թվականի համար Եվրոկոնտորոլ ներկայացված հաշվարկները, վերլուծությունը, դրա հիման վրա իրականացված կանխատեսումները, մեթոդաբանությանը վերաբերող դրույթները և մասնակցել են տեղեկանքի կազմման աշխատանքներին: Ներկայացված հաշվարկները հիմք են հանդիսանում «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի գծով 2024 թվականի ծախսերի նախահաշվի տարանցիկ չվերթների մասով եկամուտների և ծախսերի պլանավորման համար:

Աշխատանքային ծրագրով նախատեսված մյուս երկու կետերի՝ ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների, Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ ցուցանիշների ամփոփմանը և ԻԿԱՕ-ի Պետությունների գործողությունների ազգային ծրագրի (State action plan) շրջանակներում իրականացվող աշխատանքների ուսումնասիրության մասով ծանոթացել են առկա նյութերին և հաշվառել դրանք:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝



Արմինե Երզնյան

Արմինե Երզնյանի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ՝



(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ՝



Միհրան Խաչատրյան

18.12.2023թ.